մնում: Դրանք նրա մերձաւոր ազգականներիցն էին, որոնց վրայ աւելի վստահութիւն ունէր բեկը: Հիւրանոցի ետեւի կողմում մի ընդարձակ բաժին կացուցանում էր կանանոցը, ուր զետեղուած էր նրա ընտանիքը: — Այս բոլորն այնպէս յարմար կերպով վարագոյրներով բաժանուած էր մինը միւսից, որ ամբողջ վրանը ներկայացնում էր մի գեղեցիկ, շարժական ապարանք իր բոլոր սարք ու կարգով. բայց ամէնի մէջ նշմարւում էր պարզութիւն եւ նահապետական անշքութիւն:

Ինքը բեկը մի ցամաք մարդ էր միջակ հասակով, եւ կարելի է ասել աւելի կարճ, քան թէ լինում են միջակ հասակ ունեցող մարդիկ: Նրա տարիքը վաղուց անցել էին յիսունից, բայց դեռ ոչ մի մազ չէր սպիտակել գլխի վրայ: Դէմքը թուխ-դեղին գոյն ունէր, խիստ մելամաղձոտ, բայց աչքերի մէջ բորբոքւում էր վայրենի կրակ: Ինձ վրայ շատ վատ տպաւորութիւն էր գործում նրա աւազակային հայեացքը:

Բայց նա շատ քաղաքավարութեամբ դարձաւ դէպի ինձ եւ ասաց այս խօսքերը.

— Ես ուրախ եմ, որ դու ոտք կոխեցիր իմ վրանի շեմքի վրայ, որովհետեւ դու իմ «լաւ բարեկամիէ ընկերն ես:

Վերջին խօսքերի միջոցին նա ակնարկութիւն արեց Ասլանի վրայ: Ես գլուխ տոեցի եւ ոչինչ չպատասխանեցի:

Վրանի մուտքի այս եւ այն կողմերում, ձեռքները իրանց սրերի վրայ դրած, կանգնած էին բէկի հինգ որդիքը, որպէս պահապան հրեշտակներ: Նրանք երեսների բացատրութեան մէջ պարզ նշմարւում էր, թէ բաւական էր մի փոքր ակնարկութիւն հօր կողմից, եւ նրանք իսկոյն կը կոտորէին հանդիպածին:

Հայրը նրանց մէկին հրամայեց, որ ընթրիք տան:

Բեկը ինձ հետ խօսում էր եւ վարւում էր, որպէս մի երեխայի հետ: «Դու քանի՞ ձի ես գողացել, հարցնում էր նա, քանի՞ մարդ ես սպանել: — Պատահե՞լ է քեզ աղջիկ փախցնել»: — Այս եւ սրա նման շատ բանէր հարցնում էր նա այնպիսի մի հասարակ ձեւով, որպէս մէկը վարժատան աշակերտից հարցնելու լինի՝ «Դու կարդացե՞լ ես Նարեկը, կամ շարականից որքա՞ն ես անցել»:

Երբ ես պատասխանում էի, թէ նրա ասածներից ոչ մէկը չեմ կատարել. նա ծիծաղում էր, ասելով, «Որքա՞ն ծոյլ ես դու»...

Ասլանը այս խօսքերը լսելով, նոյնպէս ծիծաղում էր, բայց ես բարկանում էի: